ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5427-Ա « 06 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԱՐԻՆ ԲԵՐԴԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ Հ.9, Հ.9/1, Հ.9/5 ԵՎ Հ.11/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՐԴԱՆ ՀՐԱՉԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ, ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԵՆԵՄՇՅԱՆԻ, ԳԵՂԱՄ ՆՇԱՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ, ԹԱԳՈՒՀԻ ՊԵՐՃԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՆԱՍՏԱՍԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԵՎ ԳՈՀԱՐ ՍԱՄՍՈՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-ին, 17-րդ կետերով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12-ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 02.11.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով «ՍԵՅՍՄԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2026թ. տրված հ.Ե152-26 տեխնիկական դրական եզրակացությունը, ինքնակամ կառույցների արտաքին չափերի մասին «ՍԱՅԶ» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունները, ինչպես նաև կառույցն իրականացրած անձանց դիմումները (16.05.2025թ. հ.Դ-52589-25, 18.04.2026թ. հ.Դ-39331-26, 27.08.2026թ. հ.Դ-91601-26, 08.09.2026թ. հ.Դ-96574-26, 22.09.2026թ. հ.Դ-102122-26).

1.Երևան, Էրեբունի, Արին Բերդի 3-րդ նրբանցք, հ.9 հասցեում ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 12.04.2004թ. հ.1449028 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2026XDH6CK) քաղաքացիներ Վարդան Հրաչիկի Բարսեղյանի, Հակոբ Միքայելի Մենեմշյանի, Գեղամ Նշանի Բարսեղյանի, Թագուհի Պերճի Մեժլումյանի, Արմենուհի Անաստասի Մովսիսյանի և Գոհար Սամսոնի Պետրոսյանի կողմից ինքնակամ իրականացված 4625,7 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (արտադրական շինություններ), ինքնակամ բացված դռները՝ 3(երեք) հատ ճանաչել օրինական:

2.Երևան, Էրեբունի, Արին Բերդի փողոց, 3-րդ նրբանցք, հ.9/1 հասցեում ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16102023-01-0227 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2026DKYJZA) քաղաքացիներ Վարդան Հրաչիկի Բարսեղյանի, Հակոբ Միքայելի Մենեմշյանի, Գեղամ Նշանի Բարսեղյանի կողմից ինքնակամ իրականացված 6771,8 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (արտադրական շինություններ) ճանաչել օրինական:

3.Երևան, Էրեբունի, Արին Բերդի փողոց, 3-րդ նրբանցք, հ.9/5 հասցեում ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22062023-01-0240 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2026LSPTCR) քաղաքացիներ Վարդան Հրաչիկի Բարսեղյանի, Հակոբ Միքայելի Մենեմշյանի, Գեղամ Նշանի Բարսեղյանի կողմից ինքնակամ իրականացված 2583,1 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (արտադրական շինություններ), ճանաչել օրինական:

4.Երևան, Էրեբունի, Արին Բերդի փողոց, 3-րդ նրբանցք, հ.11/1 հասցեում ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.19022018-01-0108 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2026PPFFMH) քաղաքացիներ Վարդան Հրաչիկի Բարսեղյանի, Հակոբ Միքայելի Մենեմշյանի, Գեղամ Նշանի Բարսեղյանի կողմից ինքնակամ իրականացված 2270,5 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (արտադրական շինություններ), ճանաչել օրինական:

5. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված օրինականացման վճարները.

1) Էրեբունի, Արին Բերդի 3-րդ նրբանցք, հ.9 հասցեի ինքնակամ կառույցի օրինականացման համար՝ 18915724 (տասնութ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, Արին Բերդի փողոց, 3-րդ նրբանցք, հ.9/1 հասցեի ինքնակամ կառույցի օրինականացման համար՝ 27679733 (քսանյոթ միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար յոթ հարյուր երեսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, Արին Բերդի փողոց, 3-րդ նրբանցք, հ.9/5 հասցեի ինքնակամ կառույցի օրինականացման համար՝ 10558422 (տասը միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար չորս հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, Արին Բերդի փողոց, 3-րդ նրբանցք, հ.11/1 հասցեի ինքնակամ կառույցի օրինականացման համար՝ 9280669 (ինը միլիոն երկու հարյուր ութսուն հազար վեց հարյուր վաթսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ.

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

8. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

9. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

10.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ